REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

հեռ. 0222 6 05 22
E-mail mayakovski-1@mail.ru

N 232
18 նոյեմբերի 2013թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շահգալդյան

« Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 13-ի հերթական նիստի որոշումները :

Առդիր. 8 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան
0222-6-05-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 նոյեմբերի 2013թվական N 50-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով ,համայնքի ավագանին ***որոշում է***.

Հաստատել Մայակովսկի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 13-ի արտահերթ նիստի **օրակարգը**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի՝ հանրությանը ներկայացվող հաշվետվության քննարկում
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 68-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2013թ. նոյեմբերի 13
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2013 թվական N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմք ընդունելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ կետերը՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հանրությանը ներկայացրած հաշվետվությունը , համաձայն հավելվածի :

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2013 թ. հոկտեմբերի 9
Գ. Մայակովսկի

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի
ավագանու 2013 թվականի
Նոյեմբերի 13-ի N 51-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդրումային ոլորտ

Համայնքի 2012-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունը նպատակաուղղված է եղել 2013-2016թվականների քառամյա ծրագրով նախատեսված տնտեսական գործունեության շարունակական և հետևողական իրագործմանը:
Քառամյա ծրագրում համայնքի կարևորագույն հիմնախնդիրները համարվում էին սոցիալտնտեսական ոլորտի հիմնահարցերի լուծումը:
Հաշվետու տարում ֆոնդային բյուջեի միջոցները հիմնականում ուղղվել են համայնքի փողոցների լուսավորության անցկացման , համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների, ինչպես նաև նոր ամբուլատորիայի շենքի կառուցման իրականացման նպատակին :
Համայնքի ղեկավարի աշխատակազմը աշխատանքները արդյունավետ կազմակերպելու,համայնքի բնակչության ռեեստրը դյուրին վարելու, համայնքի եկամուտների և ծախսերի հաշվառումը,բյուջեի կատարման հաշվետվությունները ավտոմատացված տեղեկատվական համակարգովկազմակերպելու, ինչպես նաև մտից և ելից փաստաթղթերի հաշվառումը, դրանց հետ կապված գործառնությունների կատարումը և դրանց կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնելու նպատակով օգտվում է տարածքային կառավարման նախարարության աջակցությամբ համայնքում ներդրված ծրագրից և աշխատանքներ են տարվում այդ ծրագիրն առավելագույնս օգտագործելու, քանի որ ծրագրի լիարժեք տիրապետումը ոչ միայն կրճատում է որևէ գործառնության իրականացման ժամանակը, այլև ստեղծվում է համայնքի տեղեկատվական համակարգ, որը հասանելի է յուրաքանչյուր բնակչի, ստեղծվում է ինտերնետ կապ, ապահովում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը:
Ուսումնասիրություններ են կատարվել համայնքում նախադպրոցական կրթօջախի կառուցման համար տարածքի ընտրության, նախագծման, հնարավոր ներդրումային դաշտերի օգտագործման ուղղություններով՝ այդ աշխատանքների առաջին փուլն սկսելու նպատակով, որը 2012 թվականին իրականացվել և նախակրթարանը սկսել է աշխատել համայնքի միջնակարգ դպրոցի շենքում :
Համայնքի երեխաների նախադպրոցական կրթության ապահովումը ոչ միայն առաջնահերթ խնդիր էր համարվում, այլև հանդիսանում էր այն կարևորագույն հիմնաքարը, որը խթանում է մեր երկրի վաղվա քաղաքացու կրթմանն ու դաստիարակմանը:
Համայնքում փողոցների լուսավորման համակարգերի ընդլայնման նպատակով հաշվետու տարում իրականացվել են այդ համակարգերի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Նախատեսվում է 2013-2016 թվականների ընթացքում համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների հաշվին ևս մեկ փողոցում լուսավորման համակարգի կառուցումը:
Քանի որ համայնքի ֆոնդային բյուջեի միջոցները սահմանափակ են, իսկ կապիտալ ներդրումներ պահանջող ոլորտները բազմաթիվ, համայնքում կապիտալ ներդրումներ պահանջող աշխատանքներն իրականացվում են հերթականությամբ, աստիճանաբար՝ ըստ կարևորության:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ

Քառամյա ծրագրով նախատեսված գործառույթների իրականացման, համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման համար անհրաժեշտ է համադրել համայնքի ղեկավարի աշխատակազմի գծով, ընդհանուր բնույթի համայնքային և հանրային ծառայությունների գծով աշխատանքները: Աշխատակազմի յոթ համայնքային ծառայողներ իրենց պաշտոնների անձնագրերով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ղեկավարի գլխավորությամբ իրականացնում են համայնքային աշխատանքների, ծառայությունների իրենց վերապահված գործառույթների կատարումը:
Համայնքի բյուջեի գույքային հարկերի նախորդ տարիների կուտակված ապառքներն ու տույժերը գանձելու, նախորդ տարիների պարտավորությունների նվազեցման նպատակով և օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի հանդեպ բնակիչների պարտավորությունների կատարման

պահանջով շարունակվում է հարկերի գանձումը , և 2012 թվականին այն գերազանցել է 100 տոկոսը , 2013 թվականին ևս կապահովվի 100 և ավելի տոկոս : :
«Համակարգչային ծառայությունների սպասարկման» ծրագիրը ապահովել է գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական ավտոմատացված համակարգի ընթացիկ սպասարկումն ու անխափան աշխատանքը , իսկ փաստաթղթաշրջանառությունը բացառապես իրականացվում է էլեկտրոնային եղանակով ::

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Շրջակա միջավայրի պաշտպանությունը համայնքի առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրն է, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում:
Բավարար հիմքերի վրա է դրված շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի, համայնքի տարածքի սանիտարական մաքրման գործընթացը, որը ներառում է փողոցների սանիտարական մաքրման և աղբի հեռացման, աղբակույտերի վերացման, միջհամայնքային ճանապարհների եզրերի աղբի հավաքման, գերեզմանոցների տարածքի աղբի հեռացման, ձմռան ամիսներին ճանապարհներից ձյան շերտի հեռացման, սառցապատ ճանապարհներին աղ, ավազի ցանման աշխատանքները, որի հետևանքով տարվա բոլոր եղանակներին համայնքի տարածքը ունի բարեկարգ տեսք,ճանապարհները անցանելի են և երթևեկության համար անվտանգ:
Սակայն այս բոլորի հետ մեկտեղ շատ անելիքներ կան: Համայնքի բնակիչներից ոչ բոլորն են օգտվում աղբատար մեքենայի ծառայություններից: Շրջակա միջավայրի պաշտպանության համար հետևողական պայքարը 2013-2014 թվականներին առավել ամուր հիմքերի վրա կդրվի, քանի որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կանոնակարգվում են թե կենցաղային, թե խոշոր եզրաչափի(շինարարական) աղբահանության համար վճարողների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:
Համայնքի ավագանու որոշմամբ բնակչության կենցաղային աղբի տեղափոխման ամսական վճարը մեկ բնակչի հաշվով հաստատվել է հարյուր դրամ, որը նվազագույն գին է ողջ տարածաշրջանի համեմատ :
Շրջակա միջավայրի պաշտպանությունն ապահովվող հաջորդ հիմնախնդիրը գետի մաքրման աշխատանքներն են , որի համար անհրաժեշտ են հսկայական ֆինանսական միջոցներ, որը սակայն համայնքը չունի , դրա համար անհրաժեշտ է պետական աջակցություն :

Բնակարանային կոմունալ տնտեսություն

Բնակարանային կոմունալ տնտեսության կարևոր խնդիրներն են ջրամատակարարման և արտաքին լուսավորության համակարգերի բնականոն աշխատանքը: 2012 -2013 թվականների ընթացքում այս ոլորտում կապիտալ ներդրումներ չեն իրականացվել, քանի որ համայնքի բնակչությունը ապահովված է խմելու ջրով:
Կազմակերպվել է առկա լուսավորման համակարգերի ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքները՝ ապահովելով նրանց նորմալ և կանոնավոր գործունեությունը:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ

Ճանապարհային տնտեսության ոլորտում 2012-2013 թվականներին կապիտալ ներդրումներ են իրականացվել և նախորդ տարիներին իրականացված ճանապարհների ասֆալտապատ ծածկույթի պահպանման նպատակով իրականացվել են նաև ճանապարհների ընթացիկ փոսային նորոգման աշխատանքներ, որոնք ապահովում են ասֆալտապատ ճանապարհների պահպանությունը, նրանց բարեկարգ վիճակը, երթևեկության համար անվտանգ պայմանները:
<Ծիգ> պետական ծրագրի շրջանակներում կապիտալ նորոգվել է Մայակովսկի համայնքը Բալահովիտ և Արամուս համայնքներին կապող ավտոճանապարհը և ընթացքի մեջ է Մայակովսկի –Կոտայք ավտոճանապարհի շինարարական աշխատանքները :

Կրթություն

Մատաղ սերնդի խնդիրները մշտապես գտնվում են համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի ուշադրության կենտրոնում: Համայնքում գործում են «Մայակովսկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը և Մայակովսկու Նախակրթարանը :
Աջակցություն է ցուցաբերվում ինչպես Մայակովսկի միջնակարգ դպրոցին , այնպես էլ նախակրթարանին , որտեղ սովորում են 28 երեխա , իսկ մանկավարժի աշխատավարձը վճարում է գյուղապետարանը :

2012- 2013 թվականներին իրականացվել են դպրոցական ծրագրեր, որոնք խթանում են կրթության զարգացմանը, լավագույն սաների բացահայտմանը, դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծմանը:
Այս ասպարեզի կարևոր հիմնախնդիրը նախադպրոցական հաստատության բացակայությունն է; Այս բացը լրացնելու, համայնքի երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով, խնդիր կա համայնքի մանկապարտեզը գործելու , սակայն առայժմ համայնքը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ :

Հանգիստ, մշակույթ և կրոն

Համայնքում գործում է գրադարան, որի գրքային ֆոնդը կազմում է 7200 կտոր: Գրադարանից օգտվողների թիվը 250 է, որոնց մեծ մասը դպրոցի սաներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ են: Առկա գրականությունը բազմաժանր է: Գրադարանի ֆոնդը համալրված է հայ, ռուս և արտասահմանյան գրողների դասական ստեղծագործություններով, տարրական և միջին դասարանների աշակերտների համար նախատեսված հեքիաթների, շտեմարանների ժողովածուներով, բառարաններով, գեղարվեստական, արվեստի և այլ բազմաժանր գրականությամբ:
Համայնքի պատմա-մշակութային արժեքների պահպանումը, նրանց կապիտալ վերանորոգումն ու բարեկարգումը ամենակարևոր խնդիրներից մեկն է:
Համայնքը հարուստ չէ պատմա-մշակութային արժեքներով, սակայն այդ սակավ հուշարձանները համարվում են համայնքի կենսագիրն ու նրա բազմադարյան պատմության վկաները և նրանց պահպանությունը ոչ միայն կարևոր խնդիր է, այլև անընդմեջ և հետևողական աշխատանք: Այդ արժեքների գնահատմամբ է դաստիարակվում նաև մատաղ սերունդը, որն իր հայրենիքի վաղվա տերն է, զինվորն ու շինարարը:

2012 թվականը նույնպես հոբելյանական տարի էր: Համայնքը մեծ պատասխանատվությամբ և պարտքի զգացումով մասնակցեց մարզում անկախության 20-ամյա տարեդարձին նվիրված տոնակատարությանը: Տոնակատարությունների ընթացքում հատուկ վերաբերմունք ցուցաբերվեց արցախյան ազատամարտի զոհերի ընտանիքների անդամների նկատմամբ, որոնք մասնակցեցին նաև մարզում կազմակերպված միջոցառումներին: Մեծարանքի ու երախտիքի արժանի խոսքեր ասվեցին հայրենական պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմում նահատակված հայորդիների ծնողներին, հարազատներին, ազատամարտի մերօրյա հերոսներին:

2013 թվականի հոկտեմբերի 19-ին Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ << Տարվա լավագույն ապրանքանիշ և տարվա լավագույն հանրային ծառայող >> 2013 թ. մրցանակաբաշխություն : Համաժողովրդական քննարկման արդյունքում հանրային ծառայության ոլորտում Մայակովսկի համայնքի ղեկավար Վահագն Բարսեղյանը ճանաչվել է լավագույնը և արժանացել << Տարվա լավագույն հանրային ծառայող >> անվանակարգին : Համայնքում գործում է Ս.Գևորգ եկեղեցին: Եկեղեցին ունի ուխտի օր, որն ամեն տարի նշվում է:
Համայնքի բնակչությունն ավելի ակտիվորեն է մասնակցում ամռանը կազմակերպվող ուխտագնացություններին, տաղավար տոներին մատուցվող ս.պատարագներին: Այդ մասնակցությունը
նպաստում է բնակչության հոգևոր վերելքին, նրանց քրիստոնեական դաստիարակության ամրապնդմանը, աղանդավորական տարբեր ուղղությունների ազդեցության բացառմանը, հայ առաքելական եկեղեցու դերի բարձրացմանը:

Սոցիալական պաշտպանություն

Սոցիալական պաշտպանության ոլորտի խնդիրները նույնպես բազմաթիվ են: Սոցիալապես անապահով խմբերի պաշտպանության նպատակով համայնքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝
«Օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին», «Օգնություն հարազատին կորցրած անձանց», «Օգնություն ՀՄՊ-ի մասնակիցներին և արցախյան ազատամարտի զոհերի ընտանիքներին», «Այլ սոցիալական ծրագրեր»: Սոցիալ-տնտեսական ոլորտի խնդիրների լուծման համար աշխատակազմը համայնքի ղեկավարի անմիջական մասնակցությամբ և հսկողությամբ ծավալում է հետևողական և նպատակասլաց գործունեություն, ապահովելու յուրաքանչյուր բնակչի սոցիալական պաշտպանվածությունը:

Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման ոլորտ

2012-2013 թվականների ընթացքում նույնպես, ինչպես նախորդ տարիներին, Մայակովսկի գյուղապետարանը ապրանքների ձեռքբերումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը իրականացրել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան գնումներ կազմակերպելով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, հրապարակային, թափանցիկ, արդյունավետ և հավասար պայմաններ: 2013թվականի ընթացքում կկնքվեցին ապրանքների ձեռքբերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2013 թվական N 52-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 68-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Մայակովսկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 68-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխությունը.

1) ավելացնել եկամուտները՝ ընթացիկ սուբվենցիա - 194 700 / հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր/ դրամ,

ավելացնել ծախսերը - 194 700 / հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր / դրամ , «Ապարատի» 01 բաժնի 1.1 խումբ 4212 «Էներգետիկ ծառայություններ » հոդվածը :

2) 02 բաժնի 2.1 խմբի «Քաղաքացիական պաշտպանություն » հոդվածից 200 000 / երկու հարյուր հազար / դրամ տեղափոխել «Ապարատի» 01 բաժնի 1.1 խումբ 4212 «Էներգետիկ ծառայություններ » հոդվածին:

3) 03 բաժնի 2.1 խումբ «Փրկարարական ծառայություն» 4239 հոդվածից.

50 000 / հիսուն հազար / դրամ տեղափոխել «Ապարատի» 01 բաժնի 1.1 խումբ « Մեքենաների և սարքավորումների վերանորոգում» 4252 հոդվածին ,

100 000 / հարյուր հազար / դրամ `10 բաժնի 7.1 խումբ «Սոցիալական այլ օգնություններ » 4729 «Օգնություն բնակչությանը » հոդվածին :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Կողմ (4) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2013թ.նոյեմբերի 13
Գ. Մայակովսկի